

19155

ԹՐՈՂԵՏԱՐԵՐ ԲՈԼՈՐ ՁԵՐԿՄԵՐԻ, ԱԿԱԴԵՄԻ

Խ. Ա. Յ. ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՅՈՒՐԴՆԵՐԻ 7-ՐԴ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎԼՈՌԱԾՈՒՄԸ
ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԵՐԻ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԵՂՄԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՎԵԲԼԻՈՒԹԵԿԱ
ԻՆՍՏԻՎԻԱ
ԵՊՀՈԽՈՎԱՅՐԻ
Բանական Գույք
С С С Р

ԳՅՈՒՂՋԱՑՄԱՆ

1935

ՅԵՐԵՎԱՆ

328

Խ-11

19153

C 35-1
Ca954

27 SEP 2006

ՀԱՅԻ ԶԱՅ 2010
ՀԱՅՈՒԹՅԱ
ՀԱՅՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅ
ՀՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅ

Խ. Ա. Ճ. ՄԻՋԻԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ 7-րդ ՀԱՄԱԳՈՒ-
ՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Խ. Ա. Ճ. Մ. ՀՈՂԺՈՂԿՈՄ ԸՆԿ. Մ. Ա. ԶԵՐՆՈՎԻ ՑԵՎ ՀԱՅԱՀ-
ՏԻԿԱՅԻՆ ՈՒ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺՈՂԿՈՄ ԸՆԿ. Մ. Ի. ԿԱԼՄԱՆՈՎԻՉԻ՝ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԶԵՐՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱ-
ԲԵՐՅԱԼ՝ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Լսելով ԽՍՀ Միության Հողագործության Ժողովրդական Կո-
միսար ընկ. Մ. Ա. ԶԵՐՆՈՎԻ և հացահատիկային ու անասնաբու-
ծական խորհուրդների Ժողովրդական Կոմիսար ընկեր
Մ. Ի. Կալմանովիչի ղեկուցումները՝ «Անասնապահության ամրա-
պնդման ու զարգացման ձեռնարկումների մասին»՝ ԽՍՀ Միու-
թյան խորհուրդների 7-րդ համագումարն արձանագրում ե, զոր
կողեկտիվ տնտեսածեի հաղթանակը և կոլտնտեսությունների ու
մասնավորապես խորհուրդների կազմակերպչական-
տնտեսական ամրապնդումն ապահովեցին հացահատիկային պրոբ-
լեմի հաջող լուծումը և դրանով իսկ բոլոր անհրաժեշտ պայման-
ներն ստեղծեցին անասնապահության վերելքի ու հզոր զար-
գոցման համար:

Անասնապահությունը, զոր 1930—1933 թվականների ըն-
թացքում մեծ կորուստ կրեց կուլտային տարրերի վկասարար
աշխատանքից, 1934 թվականին վոտք դրեց վերելքի ուղին. Հա-
մամիութենական վիճակագրության նախնական ավյալներով տ-
նասունների թիվը առ մեկը հունվարի 1935 թ., համեմատած
1934 թ. հունվարի 1-ի հետ, ավելացել ե՝ խոշոր յեղջերափոր
անասունների թիվը ամբողջ կոլտնտեսային-գյուղացիական հատ-
վածում 21 տոկոսով, իսկ կոլտնտեսություններում՝ 30 տոկո-
սով, վոչխարների ու այծերի թիվը՝ կոլտնտեսային-գյուղացիա-
կան հատվածում՝ 11 տոկոսով, իսկ կոլտնտեսություններում՝ 18

տոկոսով, խոզերինը կոլտնտեսային-գյուղացիական հատվածում՝ 118 տոկոսով և կոլտնտեսություններում՝ 27 տոկոսով։ Ավելացել է աճեցվող մատղաշների քանակը և բարելավվել է նրանց պահպանումն ինչպես կոլտնտեսություններում ու խորհնտնտեսություններում, այնպես ել կոլտնտեսականների ու մենատընտեսների մոտ։ Անասնապահական խորհնտնտեսություններն ու կոլտնտեսային ապրանքային ֆերմաները դարձան անասնապահության վերելքի, անասունների վրակի բարելավման և ապրանքային արտադրանքի աճման հիմնական բաղան։ Առ 1-ն հունվարի 1935 թ. ստեղծվել է 194.000 կոլտնտեսային ապրանքային ֆերմա, հետեւալ քանակությամբ անասուններով՝ խոշոր յեղջերավոր անասուն 7,4 միլիոն գլուխ, վոչխար՝ 10,2 միլիոն գլուխ, խող՝ 3,5 միլիոն գլուխ և 4.700 ձիարուծական ֆերմա՝ 276.000 ձիով։

Մինչև 1934 թ. հուլիսի 1-ն ստեղծվել է ավելի քան 2000 անասնապահական խորհնտնտեսություն, ընդ վորում բոլոր խորհնտնտեսությունների անասունների ընդհանուր թիվը նույն թիվն կազմել է խոշոր յեղջերավոր անասուններինը՝ 3,5 միլիոն գլուխ, խոզերինը՝ 2,6 միլիոն գլուխ, վոչխարներինն ու այծերինը՝ 7,8 միլիոն գլուխ։

Բացի խորհնտնտեսությունների ու կոլտնտեսային ֆերմաների ունեցածից, առ 1-ն հուլիսի 1934 թվականի կոլտնտեսականներն անձնապես ունեցին 17,2 միլիոն գլուխ խոշոր յեղջերավոր անասուն, 5,4 միլիոն գլուխ խող, 17,5 միլիոն գլուխ վոչխար և այծ, իսկ մենատնտեսներն ունեցին 9,3 միլիոն գլուխ խոշոր յեղջերավոր անասուն, 2,7 միլիոն գլուխ խող, 10,5 միլիոն գլուխ վոչխար և այծ։

Անասնապահական խորհնտնտեսությունները և մանավանդ կոլտնտեսային ապրանքային ֆերմաները, կատարելով իրենց պարտագործությունները պետության հանդեպ, միաժամանակ հրակայական ոգնություն են ցույց տալիս կոլտնտեսականներին անձնապես ոգտագործելու համար անասուն ձեռք բերելու և անասունների ցեղը բարելավելու գործում, վորի հետեւանքով լուրջ հաջողություններ են ձեռք բերվել կոլտնտեսականների կովազրկությունն ու անասնազրկությունը վերացնելու գործում։ Վերջին յերկու տարում կոլտնտեսային ապրանքային ֆերմաները կոլտնտեսականներին, անձնապես ոգտագործելու համար, տվին

500.000 հորթ, 2 միլիոնից ավելի խոճկոր և 200.000 գառ։ 1933—1934 թվականներին մի միլիոնից ավելի կոլտնտեսական, պետության ոգնությամբ, կովի ու հորթի տեր դարձան։ Եթերկոների ու մարզերի ճնշող մեծամասնությունը լինակատար հնարավորություն ունի արգեն իսկ 1935 թվականին վերացնել կոլտնտեսականների կովազրկությունն ու անասնազրկությունը և շոշափելի չափով ընդարձակել մանր անասնաբուծությունը։

Հազարավոր առաջավոր կոլտնտեսային ապրանքային ֆերմաներ ու խորհնտնտեսություններ կարողացան տալ աշխատանքի հիմնալի որինակներ, հասնել բարձր կաթնատվության, համարյա կատարելապես վերջ տալ մատղաշների կորստին, կանոնավոր կերպով կատարեցին արտադրանք հանձնելու իրենց պարտավորությունները պետության հանդեպ և լայն ոգնություն են ցույց տալիս կոլտնտեսականներին՝ անասուններ ձեռք բերելու դրձում։

Միևնույն ժամանակ, խորհուրդների համագումարը մատնաշում է, վոր անասնապահությունը մինչև այժմ ել հանդիսանում և գյուղատնտեսության ամենից ավելի հետամնաց ճյուղը, ընդ վորում առանձնապես անբավարար և ծիրակություն ու վոչխարաբության վիճակը։ 1934 թվականին վոչխարների թիվը նույնիսկ ավելի քիչ ավելացավ, քան խոշոր յեղջերավոր անասունների թիվը։ Զիերի թիվը 1934 թվականին գեռ չհասավ կայունացման և, համեմատած 1934 թ. հունվարի 1-ի հետ, 1935 թ. առ 1-ն հունվարի կրծատվել և ամբողջ կոլտնտեսային գյուղացիական հատկածում 3 տոկոսով, մինչդեռ կոլտնտեսություններում ծիրերի թիվը ավելացել է 8,5 տոկոսով։ Անասունների մթերատվաթյունը, մանավանդ կովերի կաթնատվությունը դեռ գտնվում և շատ ցածր մակարդակի վրա։ Այդ գործում գյություն ունեցած մեծ հնարավորությունները մինչև այժմ ել թույլ են ոգտագործվում։

Կերի արտադրությունը և մանավանդ աբուավայրային տնտեսությունները գտնվում են անբավարար վիճակում։ Կոլտնտեսային-գյուղացիական հատկածում խոտհարքների տարածությունը 1931 թվականի 49,6 միլիոն հեկտարից 1933 թվականին իջավ 39,3 միլիոն հեկտարից և միայն 1934 թվականին (հնձվեց 40,9 միլիոն հեկտար) բեկում ուրիշգործեց խոտհարքների ընդարձակման ասպարիգում։ Դաշտագործական խոտացանությունը և մանավանդ առվույտացանությունը չի զարգանում,



ՀՍՀՄ-Ա. ԽՈՅՉԻ ՊԵՏ.

61063 - 67

կերաբույսերի ընթատվությունը շարունակում է մնալ շատ ցածր մակարդակի վրա Յանովի արուների հնձելի տարածությունը կորոնտեսային գյուղացիական հատվածում 1931 թվականին 6.150 հազար հեկտարից 1933 թվականին իջավ 4.737 հազար հեկտարի և 1934 թվականին՝ մինչև 4.545 հազար հեկտարի: Անշարժավար և անասնապահության անասնաբուժական ու անասնաբուժական սպասարկումը:

Կուսակցության ու կառավարության առաջադրած խնդիրը՝ մինչև յերկրորդ հնգամյակի վերջերն անասնապահության արտադրանքն ավելացնել յերկու և մեկ քառորդ անգամ, հողային որդաններից, կոլտնտեսություններից, խորհունտեսություններից, ամեն մի խորհրդային մասնագետից, զոտաեխնիկից և անասնաբուժական աշխատողից պահանջում և անձնվեր աշխատանք կատարել անասնապահությունը բարձրացնելու և զարգացնելու ուղղությամբ, հիմք ընդունելով ընկ. ՄԾԱլինի այն ցուցումները, թե անասնապահության գործը պետք և իրենց ձեռքը վերցնեն ամբողջ կուսակցությունը, մեր բոլոր կուսակցական ու անկուսակցական աշխատողները, ինկատի ունինալով, վոր անասնապահության պրոբլեմն այժմ նույնպիսի առաջնահերթ պրոբլեմ ե, ինչպիսին եր յերեկ՝ արդեն հաջողությամբ լուծված հացահատիկային պրոբլեմը:

Անասնապահության հետագա վերելքի համար մղվող պայքարում հոգային, խորհունտեսային ու խորհրդային կաղմակերպությունների աշխատանքի կենտրոնական առանցքը պետք և կազմի անասնապահական կոլտնտեսային ապրանքալին փերմաների ծավալում ու ամրապնդումը և անասնապահական խորհունտեսությունների ամբապնդումը:

1934 թվականին ձեռք բերված հաջողությունների հիման վրա, 1935 թվականը պետք և դառնա անասունների քանակի ավելի ուժեղ աճման, նրանց վորակի բարելավման և արտադրանքի ավելացման տարի: Անասնապահության զարդարացման 1935 թ. պետական պլանը, վոր մացրել և կառավարությունը, պետք և բացառի դեր խաղա՞մութիվ լինթարկելու մասսաներին անասնապահական պրոբլեմը լուծելու համար, նույն չափով, ինչ չափով վոր ցանքի կամպանիան իր դերը խաղաց հացահատիկային պրոբլեմը լուծելու գործում:

Համագումարը հավանություն և տալիս անասնապահության զարգացման 1935 թ. պետական այն պլանին, վորը սահմանել և

կառավարությունը, և գտնում և, վոր յուրաքանչյուր գյուղխորհը յուրաքանչյուր խորհունտեսության ու կոլտնտեսության, յուրաքանչյուր կոլտնտեսականի և աշխատավոր մենատնտեսի պատվի ու պարտականության հարցն ե՝ լրիվ կատարել այդ պլանը:

ԽՍՀ Միության խորհուրդների 7-րդ համագումարը հետեւյալ հերթական խնդիրներն ե գնում ԽՍՀՄ Հողժողկոմատի, Խորհունտողկոմատի ու խորհրդային մյուս որգանների առջև, ինչպես և խորհունտեսությունների ու կոլտնտեսությունների առջև:

1. Անասնաբուժական խորհունտեսությունները պետք և դառնան ցեղական անասունների բարելավված տեսակների բուծարաններ, ընդարձակեն ապրանքային մթերքների արտադրությունը, ծավալելով կոլտնտեսային ապրանքային ֆերմաներին և կոլտնտեսականներին ոգնություն ցույց տալու աշխատանքը, վաճառելով նրանց հասունացած անասուններ ու մատղաշներ և մանավանդ ցեղական արտադրողները:

Առաջարկել ԽՍՀ Միության հացահատիկային ու անասնապահական խորհունտեսություններին, հողագործության և սննդարդյունաբերության ժողովրդական կոմիսարիատներին, վորպեսզի խորհունտեսությունների աշխատանքի կարևորագույն գործնական խնդիր ընդունեն նրանց լիակատար մաքրումը տարափոխիկ հիվանդություններից, զգալի չափով բարելավին անասունների խնամքը և ճիշտ կազմակերպեն նրանց կերպարումն ու գիրացումը:

Խորհունտեսությունները կարելի յերինակելի հասութաբար ձեռնարկություններ դարձնել միմիայն այն գետքում, յերբ արմատացվի խոկական տնտեսավարկը և վճռաբար պայքար մղվի անտնտեսվարության ու նպաստընկալակն տրամադրությունների դիմ: Թարտային սիստեմի վերացումը և այն հանգամանքը, վոր խորհունտեսությունների անասունների համար այլևս պետական գներով կեր չի մատակարարվում, վերջ և տալիս այդ արամագրություններին և խորհունտեսությունների զիրեկտորներին պարտավորեցնում և բոլցիկորեն ձեռնամուխ լինել յուրաքանչյուր խորհունտեսության մեջ ստեղծելու կերի ու պարենամթերքի սեփական բաղաւ: Անասնապահական բոլոր խորհունտեսություններում և ձիարուծական խորհունտեսություններում 1935 թվականին պետք և մացվի կերպույսերի ցանքաշրջանառություն և ընդարձակվեն կերպույսերի, հացահատիկային ու լոբիանման

մշակույթիների, խոռոչի, սիլոսային մշակույթների ու կարտոֆիլի ցանքերն այնպիսի հաջողվ, վոր յուրաքանչյուր խորհնանեանություն լրիվ ապահովի իր անասուններին սեփական կերպով:

Յուրաքանչյուր խորհնանեանության մեջ և նրա ամեն մի ֆերմայում պետք է ամենախիստ վերանսկողություն սահմանվի կերի, հացի և այլ մթերքների ու նյութերի ծախսման վրա, և ամենակատաղի տայքար մղվի կերամիթերքի վատնման, դորդության ու վչացման գեմ:

Հանձնաբարել Խորհնամողկոմատին՝ հաստատուն առաջարկ սահմանել տրեստներում ու խորհնանեսություններում յուրաքանչյուր մայր խողից ստացվելիք մայրին արտադրանքի նկատմամբ:

2. Անասնապահության վերելքի ու զարգացման գործում գնուկան դիր են խաղում կոլտնտևային ապրանքային ֆերմաները: Արդեն իսկ 1935 թվականին չպետք է մնա վոչ մի կոլտնտևանություն՝ առանց անասնապահական ապրանքային ֆերմայի:

Պետք են գնուական հականարված տալ ապրանքային ֆերմաները հոտերը վատնելու փորձերին՝ վորակելով այն վորպես զասակարգային թշնամու հակառակութեապային յելույթներ:

Ապրանքային անասնապահական ֆերման. հանդիսանում է կոլտնտեսության հանրային տնտեսության կարևորագույն ճակատամասերից մեկը, ամենակարևորագույն գործիքներից մեկը՝ կոլտնտեսության հարստությունն ավելացնելու և կոլտնտեսականների ուներությունն ապահովելու համար:

Կոլտնտեսությունների անասնապահական ապրանքային ֆերմաների հիմնական խնդիրներն են՝ ավելացնել անասնապահության ապրանքային մթերքների արտադրությունը և ոգնությունը ցույց տալ կովազուրկ կոլտնտեսականներին՝ ձեռք բերելու կովեր ու մանր անասուններ, անպայման աճեցնելով իրենց ֆերմաների հոտերը, բարձրացնելով անասունների ցեղականությունն ու մթերատվությունը,

Արեւյան ու լեռնային շրջաններում, ուր ներկա ժամանակաշրջանում կոլեկտիվացման հիմնական ձեռք հանդիսանում են հոգոգտակործական ընկերությունները, պետք է ստեղծվին անասնապահական ընկերություններ՝ միատեղ խոտհունձն ու անասունների արածումը կազմակերպող անասնաբուծության մթերքները

վերամշակող և վաճառահանող, ցեղական արտադրողներ ձեռք բերող ընկերություններ:

Կոլտնտեսություններն իրենց առջև դրված խնդիրներն իրագործելու համար, պետք են վճռաբար բարձրացնեն իրենց անասնապահական ֆերմաների աշխատանքի վորակը: Խորհուրդները, նրանց գործադիր կոմիտեները, հողային որգանները և կոլտնտեսությունների վարչությունները պետք են ձգտեն արմատացնել ֆերմաների պրակտիկայում անասնապահական բարձր տեխնիկան, պետք են ձգտեն, վոր պահպանվեն անասնաբուժական ու անասնաբուժական կանոնները, վոր անասնապահական բրիգադների համար ընտրվեն սոցիալիստական հողագործության շինարարությանն ամենից ավելի նվիրված կոլտնտեսականներ ու կոլտնտեսուհիներ, ձեռնարկումներ գործադրեն բարձրացնելու անասնապահական կազրերի վորակը և բոլոր ֆերմաներում առանց բացառության արմատացնելու աշխատանքի հստակ կազմակերպումը գործավարձի հիման վրա, և լայն գործադրյան անասնապահ կոլտնտեսականների պարզեատարումը բնամթերքով՝ մատղաշներով, աշխատանքի լավ որբնակների համար:

Առանձնապես կարենու նշանակություն տալով այն հանգամանքին, վոր 1935 թվականին արտելների հանրայնացված հոտերից կազմակերպվելու յետոնվազն 70.000 նոր ֆերմա՝ կոլտնտեսականների ու մենատնտեսների մատղաշները կոնտրակտացիայի յինթարկելու միջոցով՝ համագումարը պարտավորեցնում և արտելների վարչություններին և տեղական խորհրդային կազմակերպություններին լայն ծավալել տեղական շինանյութերի որաբաստումը, անասնապահական զանազան մանր ինվենտարի ու սարքավորման արտադրումը տեղական արդյունարկերության գծով, և կազմակերպել կոլտնտեսությունների համար տեխնիկական ոգնություն՝ կառուցման նախազներով և տեխնիկական հրահանգչությամբ, իսկ Անտառժողովումատին և Յենտրասոյությունների պարտավորեցնում և ծավալել անտառանյութերի պահեստների ցանցը՝ կոլտնտեսություններին անտառային շինանյութեր վաճառելու համար:

3. Նկատի ունենալով, վոր մեղվաբուծությունը հսկայական դեր և խաղում վոչ միայն վորպես գյուղատնտեսության բարձր յեկամտարեր ճյուղ, այլև միենույն ժամանակ կարևորագույն միջոց և հանդիսանում սերմերի ու կերաբույսերի, մասնավորապես

առվույտի բերքատվությունը բարձրացնելու համար, խորհուրդների համագումարն առաջարկում և ԽՍՀՄ-ի Հողժողկոմատին և Խորհուրդություններում, կողակի ծեռականացնելու մշակել խորհուրդներում, կողակի այլ այլ պարզացնելու, մեղքաբուծական ինվենտար արտադրելու ու հայթայթելու և մեղքաբուծների կալվեր պատրաստելու համար:

4. Անասնաբուծական կոլտնտեսային ապրանքային ֆերմաներն ել ավելի ընդարձակելու և զրանք կազմակերպչորեն ու տնտեսապես ամրապնդելու հետ մեկական բոլոր տեղական խորհուրդները, գործադիր կոմիտեները, հողային որդաններն ու կոլտնտեսությունների վարչությունները պետք և աշխատանք ծավակն կոլտնտեսականների տնտեսություններում կոփարկությունն ու անասնագրկությունը վերացնելու ուղղությամբ:

Մուկվայի, Լենինգրազի, Արեմյան, Կալինինի, Իվանովի, Սվերդլովի, Չելյաբինսկի ու Ռմակի մարզերը, Կիրովի, Հյուսիսյային, Գորկու, Կրամնոյարսկու, Արևմայան Սիբիրի, Արելյան Սիբիրի ու Ստոլինգրադի յերկները, Անդրկովկասյան հանրապետությունները, Բելոռուսիայի Սիչ-ն, Բաշկիրայի ինքնավար Սիչ-ն Թաթարստանի ինքնավար Սիկ 1935 թվականին պետք և կատարելապես վերացնեն կոլտնտեսականների կոփարկությունը Մնացած մարզերում ու հանրապետություններում կոփարկությունը պետք և վերացվի 1936 թվականին Մինչև հնդամյակի վերջնը չպետք և մնա վոչ մի կոլտնտեսական, վոր կով ու մանր անասուն չունենա անձնապես ողտագործելու համար:

5. Գտնելով, վոր անասնաբուծության դարգացման 1935 թվականի համար սահմանված պետական պլանի կատարումը հզոր մղում կտա նրա հետագա վերելքին՝ խորհուրդների համագումարն առանձնապես շեշտում և կառավարության սահմանած այն առաջարանքի կատարման հսկայական նշանակությունը, վորի համաձայն խորհուրդներու, կոլտնտեսային ապրանքային ֆերմաները, կոլտնտեսականներն ու մենատնտեսները պետք և աճեցնեն 11,4 միլիոն գլուխ հորթ, 14,8 միլիոն գլուխ խոնդոր, 16,6 միլիոն գլուխ գառ ու ուլ և 2 միլիոն գլուխ մըտքուկ:

Մատղաշ անասուններ մեծացնելու պլանը կատարելիս, պետք և հատուկ ուղադրություն նվիրել անասնապահության հետ մա-

ցող ճյուղերին՝ վոչխարաբուծությանն ու ձիաբուծությանը: Վաչխարաբուծությունն առանձնապես նպաստավոր պայմանների մեջ գնելու համար: ԽՍՀ Միության կառավարությունը պետք և արտոնությունները տա վոչխարաբուծական անտեսություններին և առաջին հերթին արտոնությունները տա զարգացնելու նրաբուրդ վոչխարաբուծությունն ու կողիտ բուրդ ունեցող վոչխարների մետիսացումը, բուրդ հանձնելու նորմաները՝ 1934 թ: Գործող նորմաների հետ համեմատած նվազեցնելու ուղղությամբ:

1935 թվականը պետք և բեկման տարի գառնա ձիաբուծության զարգացման, թէկան յեզների աճեցման ասպարիզում իսկ Արևելյան շրջաններում՝ ուղարկություն, ջորաբուծության, իշարուածության և այլքագույն Հյուսիսում լեղջերաբուծության համար Զիարութելունը, վոր վերջին տարիներս, ձիու հետույթ վարվելու պատճառով, առանձնապես մեծ կորուստ և կրել հատուկ հոգատարություն և պահանջում: Բոլոր կոլտնտեսականները, մենատնտեսները—ապագա կոլտնտեսականները պետք հիշեն, վոր պյուղատնտեսության նույնիսկ ամենալայն մեքենացման գեղգում, ձին ու թէկան յեղը հսկայական գեր են խաղում ու խաղալու յեն, վարպես քաշող ուժ, վոր անհրաժեշտ լրացում և մեքենայի համար:

Զիերի աճեցումն ուժիղացնելու նպատակով, Մշգործկոմները և քաղխորհուրդներն իրենց տրամադրության տակ զամբիկ ունեցող բոլոր կոլտնտեսությունների, խորհուրդնտեսությունների, ինչպես և բոլոր անտեսական, կոռուբրատիվ ու հասարակական կազմակերպությունների համար պետք և սահմանեն մարուկածիցներու պլան:

Հատուկ ուշադրություն պետք և նվիրել ձիաբուծարանների աշխատանքի բարելավմանը: Ընդունել, վոր ձիաբուծարանները հանդիսանում են համակցված անասնաբուծական անտեսություններ, վորոնց հիմնական խնդիրն և՝ բարձրորակ ձի արտադրելով և անասնապահության մյուս ոժանդակ ճյուղերը զարգացնելով հանգերձ, նաև զարգացնել զաշտագործությունը՝ ձիաբուծարանների հատիկակերի ու հացի կարիքները բավարարելու: համար:

Խորհուրդները, գործադիր կոմիտեները և կոլտնտեսությունների վարչությունները պետք և ամեն կերպ ոգնություն ցույց տան կոլտնտեսականներին՝ թոշուններ ու հազարների ձեւք բերելու գործում:

Շը ջանային գործադիր կոմիտեները և գյուղական խորհուրդը պարտավոր են խիստ վերահսկողություն սահմանել զոր խորհութեանսեռություններում, կոռավերատիվ տնտեսություններում, բանաստուկարարման բաժիններում, կոլտնտեսություններում և կոլտնտեսականների ու մենատնաենների տնտեսություններում կատարվին ամեն տեսակի մատղաշ անասունների աճեցման առաջադրանքները՝ մոքելի վացիայի յենթարկելով այդ պլանի շուրջը կոլտնտեսականների, մենատնաենների և խորհութեանսային բանավորների ամբողջ մասսային ու միջոցներ ձեռք առնել, զոր կատարելապես վերջ տրվի մատղաշների մորթելուն և նբանք պահպանեն կոտորվելուց:

6. Հոտերի բարելավումը և անասունների մթերատվության բարձրացումը կարենրագույն պայման և ամբողջ անասնապահության վերելքի համար:

Համեմատմաքը խորհրդային ու հոդային որդանների ու կոլտնտեսությունների առջև խնդիր և դնում՝ առաջիկա 2—3 տարում կախապատկել կովերի կաթնատվությունը կոլտնտեսային ֆերմաներում, զգալի չափով ավելացնել մաք ու ըրզի արտադրանքը և դրանով իսկ ավելացնել ամբողջ անասնապահության յեկամարդությունը:

Խորհուրդների համագումարը հանձնարարում և Հողգորկումատին և Խորհանտմողկոմատին՝ բոլոր անհրաժեշտ ձեռնարկումները գործադրել՝ առաջիկա տարիներում վոչ-ցեղական անասունները ցեղականով ու տեղական մթերապստ անասուններով փոխարինելու համար: Առաջարկել ԽՍՀՄ-ի Հողագործության Ժողովրդական Կոմիտարիատին և Խորհութեանողկոմատին՝ արդեն իսկ 1935 թվականին կազմակերպել 6 միլիոն զլուխ վաշխարի, 5 միլիոն գլուխ կողի և մեկ ու կես միլիոն խոզի մետիսացումն այնպիսի հաշվով, զոր մինչև յերկրորդ հնդամյակի վերջերը մետիսացումը լրիվ ընդգրկի կոլտնտեսային ապրանքային ֆերմաների ու խորհութեանությունների բոլոր մայր անասուններին, և զգալի չափով ընդարձակվի կոլտնտեսականների ու մենատնաենների անասունների մետիսացումը:

Դաշնակից ու ինքնավար հանրապետությունների կառավարություններին, յերկրային, մարզային ու շրջանային գործադիր կոմիտեներին հանձնարարվում և հատուկ հսկողության տակ վերցնել կոլտնտեսային ցեղական անասնապահական ֆերմաների, ցեղական անասնապահական խորհութեանությունների ու պետական

ցեղական անասնաբուծարանների աշխատանքը և միջոցներ ձեռք տոնել, վոր 1935 թվականին վոչ միայն ընդարձակվի այդպիսի ֆերմաների ցանցը՝ այլև լրջորեն բարելավվի նրանց աշխատանքը:

7. Անասնապահության զարգացման հիմական պայմանն է կերի հաստատուն բազայի ստեղծումը: Դաշնակից ու ինքնավար հանրապետությունների ժողկամբորհները, յերկրային ու մարզային գործկոմները պարտավոր են 1935 թվականին վերջ տակ կերի բազայի նետ մնալուն և հատուկ հսկողության տակ վերցնել կերի արտագրության պահպանման ու ծախսման գործը:

Մարգագետիններն ու արոտավայրերը բարելավելու նորատկով, համագումարն անհրաժեշտ և համարում:

ա) մարգագետիններն ու արոտավայրերը բարելավելու աշխատանքը, խոտհնձի ու սիլոսացման աշխատանքը մացնել ՄՏԿ-ների ու կոլտնտեսությունների արտագրական պլանների մեջ.

բ) սկսած 1935 թվականից՝ արոտավայրերն ու խոտհնձի հողամասերն ամբացնել կոլտնտեսություններին և մենատնաենների խմբերին.

գ) պարտավորեցնել շրջանային գործադիր կոմիտեներին՝ արոտավայրերն ու մարգագետնային հողամասերն ոգտագործող քոլոր անտեսությունների համար սահմանել այդ հողամասերը խնամելու և բարելավելու պարտադիր կանոններ.

դ) առաջարկել ԽՍՀՄ-ի կառավարությանը՝ դյուզատնաեսության վարկային պլանում կոլտնտեսությունների համար հախատեսնել հատուկ յերկարատ վարկեր՝ մելիորացիայի ու ջրամատակարման տմբնապարզ ձեռնարկումներ գործադրելու, մարզագետնաւարոտավայրեցն խոտերի սերմացուն զնելու, հանգային պարաբռանցութեր, մարգագետիններ ժամկող ու մելիորատիվ ինվենտար և մեքենաներ գնելու համար, ընդուժմին պարտավորեցնելով արդյունաբերությանը՝ ծովալել զրանց արտագրությունը.

ե) հանձնարարել Սննդարդյունաբերության ժողկոմատին՝ արագացնել ու ընդարձակել արդյունաբերության այն մնացորդների վերամշակումը, վորոնք մեծարժեք կեր են հանդիսանուն անասնապահության համար (չոր քուսպի, պատոկայի և ողուտակուցքի արտադրությունը, ձկան ու սպանդանոցների մնացորդների վերամշակումը, արյան վերամշակումը, մսավուկրային ալյուրի և այլ նյութերի պատրաստումը).

դ) հանձնել կորհնտեսություններին և կորհնտեսականներին ձրիաբար յերկարատև ոգտագործելու համար՝ չուղագործվող արտավայրերն ու խոտհարքները, վորոնք պատկանում են պետական ու տեղական նշանակություն ունեցող անտառներին և խորհնտեսություններին.

Ե) պարտավորեցնել հողային ու խորհնտեսային օրգաններին՝ առանց բացառության, բոլոր կոլտնտեսություններում և խորհնտեսություններում կազմակերպել կերպ վերամշակումը (հարդի ու արմտապուղների կտրատելն ու խաշելը, հացահատիկի մանրացումն ու աղալը): Այս նպատակով առաջարկել կոլտնտեսություններին ու խորհնտեսություններին՝ ավելի լայն չափով գործադրել ամենապարզ շարժիչները (ջրային ու քամու), ինչպես և լայն ոգտագործել կոլտնտեսային աղացները.

Ը) առաջարկել ԽՍՀՄ-ի Հողժողկոմատին և Խորհնտեսողկոմատին՝ ավելի լայն ծավալել կերային դաշտագործական մշակույթների և մարդագետնային ու արոտավայրային խոտերի սիրմի արտադրությունը, տառանձնացնել այդ նպատակով սերմնաբուծական հատուկ խորհնտեսություններ ու կոլտնտեսություններ, միևնույն ժամանակ ամրացնելով գոյություն ունեցող մարդագետնային ու արոտավայրային խոտերի սերմնաբուծաբանները, ծավալել նոր սերմնաբուծաբանների լրացուցիչ ցանց այնպիսի հաշվով, վոր առաջիկա 3—4 տարում ստեղծի սերմնաբուծական բազա, վարն ապահովի կոլտնտեսությունների ու խորհնտեսությունների ամրող պահանջը կերաբույսերի սերմացվի

Մատնանշելով, վոր մի շարք շրջաններում պատշաճ հոգատարություն չկա կոլտնտեսականների անձնական անասուններին կերով ապահովելու գործում, համագումարը պարտավորեցնում և շրջանային գործադիր կոմիտեներին, գյուղխորհուրդներին և կոլտնտեսությունների վարչություններին՝ հանրայնացված անասունների համար կերի պահանջը վորոշելիս, խոտեհարքներ ու արոտավայրեր հատկացնելիս և սիրոսացման պլանը սահմանելիս, հաշվի առնել նաև կոլտնտեսականների անասունների պահանջը:

8. Համագումարը պարտավորեցնում և ԽՍՀՄ-ի Հողագործության ժողովրդական կոմիտարիատին և դաշնակից հանրապետությունների հողագործության ժողովրդական կոմիտարիատներին՝ արմտապետության անասութական, արտադրական և գոռտեխնիկ սպասարկումը:

Այս նպատակով, համագումարն առաջարկում է ԽՍՀՄ-ի Շանը Արդյունաբերության ֆողովրդական կոմիտարիատին, Անտառային ու Մննդի Արդյունաբերության ժողովումատներին և Հողագործության ժողովրդական կոմիտարիատին՝ ապահովել անտառաբուժական և անասնաբուծական գործիքների ու ինվենտարի, ախտահանիչ միջոցների, կենսաբանական պրեպարատների ու ղեղերի արտադրությունն այնպիսի քանակությամբ, վոր լիովին սպահովվի անասնապահության կարիքների բավարարումը:

Առաջարկել ԽՍՀՄ-ի Հողժողկոմատին, Խորհնտեսությունը մատին, Մանը Արդյունաբերության ժողովումատին և տեղական արդյունաբերության հանրապետական ժողովումատներին՝ կաղմակերպել ինվենտարի արտադրությունը՝ խորհնտեսություններում ու կոլտնտեսություններում կաթ ու կաթնամթերք վերամշակելու, պահելու և փոխադրելու, ինչպես և մեքենաների ու ինվենտարի արտադրությունը՝ կերը վերամշակելու համար:

9. Կոլտնտեսային անասնաբուծական ֆերմաների աճումը, յերբ միաժամանակ զգալի չափով ավելացնել և նրանց անասունների ու թոչունների թիվը, վճռաբար առաջադրում՝ և անասնապահական ֆերմաներում աշխատանքի մեքենայացման ամենապարզ ձևերը (կերի վերամշակումն ու անասուններին կերակրելը, ջրելը, շնորհելու աղբեցը և այլն):

Համագումարը հանձնաբարում է ԽՍՀՄ-ի Հողժողկոմատին՝ արդին իսկ 1935 թվականին ձևանամուխ լինել արմատացներու ֆերմաններում աշխատանքի մեքենայացման ամենապարզ ձևերը (կերի վերամշակումն ու անասուններին կերակրելը, ջրելը, շնորհելու աղբեցը և այլն):

10. Աչքի առաջ ունենալով, վոր անհրաժեշտ և լրացնել անասնապահական վորակալ կադրերի պահապությունը՝ համագումարն առաջարկում է ԽՍՀՄ-ի Հողագործության ժողովրդական կոմիտարիատին, գաշնակից ու ինքնայր հանրապետությունների ժողովրդաբաններին և յերկրային ու մարդաբաններին, ընդարձակելով հանգերձ անտառաբուժական անասնաբուծական բՈՒՀՆերի ու տեխնիկամերի ցանցը՝ կազմակերպել անասնապահական կադրերի լայն պատարաստումը հենց կոլտնտեսականներից շրջանային կոլտնտեսային դպրոցներում ու հատուկ դատընթացներում, կազմակերպել կոլտնտեսականների մասսայական հեռակա անասնաբուժական ուսուցումը և ապահովել նրանց անասնապահության վերաբերյալ հանրամատչելի գրականու-

թյամբ՝ հատուել ուշագրություն նվիրելով գրականության հրատարակմանն ազգային լեզուներով:

Խորհուրդների համագումարի վորոշումների իրականացման գործում կարևորագույն նշանակություն և ստանում անսահմաղանության աշխատանքում իրենց ցույց տված լավագույն մարդկանց ամբացման հարցը, առանձին ճյուղերում մասնագիտացած անսանարուծական նոր կազմերի պատրաստումը՝ սկսած շըջանային հողբաժինների աշխատողներից, ֆերմաների վարչություններից մինչև խորհուրդներում կոլտնտեսությունների ստորին աշխատողները:

21. Անսանապահական տեխնիկայի առաջավոր մարդկանց փորձն ու նվաճումները լավագույն կերպով ողտագործելու համար, կազմակերպել շրջանային ու մարզային ցուցադրումներ, անսանապահական ցուցահանդեսներ, լավագույն անսանապահական տնտեսությունների մրցությունները:

Համագումարը հանձնաբարում է կառավարությանը՝ քննարկել համամիտւթենական դյուլատնտեսական անսանապահական ցուցահանդես կաղմակերպելու ժամկետի հարցը:

**

Կուսակցությունն առաջ և քաշել անսանապահության վերելքի մի նոր, հզոր գործիք՝ պետական պլանը:

Խորհուրդների 7-րդ համագումարը պարտավորեցնում է խորհրդային բոլոր կազմակերպություններին՝ գործարար վորով կազմակերպել անսանապահության զորքացման 1935 թ. պլանի կատարումը և մորթիթզացիայի յենթարկել այդ պլանի շուրջը կորոնտեսականների ու մենատնտեսների ամենալայն մասսաներին:

Հացահատիկային պրուրեմի լուծումը և վերջին տարիներու խոշոր սոցիալիստական անսանապահության նոր ձևերի ստեղծումն անսպառ հնարավորություններ են տալիս անսանապահությունը զարգացնելու և բարձրացնելու համար: Մեր խնդիրն է՝ ողտագործել այդ հնարավորությունները՝ ամենակարճ ժամանակամիջոցում անսանապահության պրոբլեմը լուծելու համար, լայն զարգացնելով սոցմքցումն ու հարվածայնությունը կոլտնտեսական մասսաների ու խորհուրդների միջև:

Խորհուրդների համագումարը չի տարակուսում, վոր գյուղի լավագույն ուժերի միահամուռ աշխատանք կատարելու ղեկքում, այդ խնդիրը պատվով կիրագործվել:

ԽՍՀ Միության Խորհուրդների

VII համագումարի նախագահ՝

Ս. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀ Միության Խորհուրդների

VII համագումարի քարտուղար՝

Ա. ՑԵՆՈՒՐԻՉՅԵՎ

Մոսկվա, Կրկեր
1935 թ. փետրվարի 6





Թարգմ. Խմբագեց Ա. Ղազարյան

Գլամիլիստի լիտոր № 9-67

Արբագրիչ Գար. Հակոբյան

Հրատ. № 187

պատվեր № 140

տիրած 2000

Հանձնված ե արտադրության գիտրվարի 20-ին 1935 թ.

Ստորագրված ե առաջնորդ գիտրվարի 28-ին

Գյուղերատի տպարան, Յեղեկան, Նալբանդյան 50

ՀՀ Ազգային գրադարան



NL0199646

110

ԳԵՐԱԾ ՅՈ ԿԱՊ.

35-
295

21



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ

ПОСТАНОВЛЕНИЕ VII СЕЗДА СОВЕТОВ
СОЮЗА С. С. Р.

по докладам народного комиссара земледелия Союза
С. С. Р. тов. Чернова М. А. и народного комиссара
зерновых и животноводч. совхозов т. Калмановича М. И.
о мероприятиях по укреплению и развитию
животноводства.